ՆԱԽԱԳԾԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նախագծի թեման է՝ «Անցումային վերջին շրջանում երիտասարդների հոգեբանական ձևափոխությունների հոգեսեմանտիկ վերլուծությունը» (Շիրակի մարզի օրինակով)։ Երիտասարդությունը, որպես հատուկ սոցիալ-տարիքային խումբ, գտնվելով մասնագիտական և սոցիալական ձևավորման ակտիվ գործընթացում, արդյունավետորեն հարմարվում է անցումային շրջանի քաղաքական, տնտեսական, սոցիալական, տեղեկատվական փոփոխություններին։ Անցումային վերջին շրջանում երիտասարդների արժեհամակարգերի, սոցիալական դիրքորոշումների, ազգային և անձնային իդենտիկության, քաղաքական և իրավական ինքնագիտակցության ձևափոխությունների հոգեսեմանտիկ ուսումնասիրումն արդիական հիմնախնդիր է, որը հոգեբանական գիտական հետազոտության կարիք ունի։

Հետազոտական նախագծի նպատակն է կատարել Շիրակի մարզի երիտասարդների մոտ անցումային վերջին շրջանում տեղի ունեցած հոգեբանական ձևափոխությունների հոգեսեմանտիկ վերլուծություն։ Հետազոտության ընթացքում կբացահայտվեն անցումային վերջին շրջանում երիտասարդների կենսակերպի, իդենտիկության, սոցիալական պատկերացումների, արժեքային համակարգի, սոցիալական դիրքորոշումների, աշխարհի պատկերի, վարքի առանձնահատկությունների ձևափոխման հոգեբանական հետևանքները՝ պայմանավորված ինչպես արտաքին հանգամանքներով (հեղափոխություն, երկրի քաղաքական և տնտեսական իրավիճակի փոփոխություններ), այնպես էլ ներքին գործոններով (երիտասարդների մոտ ինքնիրականացման ձգտում)։ Կատարված հետազոտությունների արդյունքները կարող են ներդրվել անձի, տարիքային, սոցիալական հոգեբանության դասընթացներում։